Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
օգոստոսի 18-ի N 848 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1691 - Ն որոշման

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՕԳՏՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է զինծառայողի, քրեակատարողական ծառայողի, փրկարար ծառայության ծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 5.2-րդ կետով նախատեսված՝ սոցիալական փաթեթի շահառուների պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանքի (այսուհետ՝ միասնական տեղեկանք) տրամադրման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 4.5-րդ կետի համաձայն զինծառայողի, քրեակատարողական ծառայողի, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողի համար առողջապահական փաթեթի կանխարգելիչ բժշկական քննություն անցնելը սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու պարտադիր նախապայման չի հանդիսանում: Նշված անձինք իրենց սոցփաթեթի հաշիվը սպասարկող բանկ են ներկայացնում զինծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ փրկարար ծառայության ծառայող լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ կամ տեղեկանք կամ պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանք՝ N 1 ձևին համապատասխան:

3. Պետական մարմինները միասնական տեղեկանքներ ստանալու համար, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում հայտ՝ N 2 ձևին համապատասխան, միասնական տեղեկանքի ստացման համար լիազորված անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ և լիազորագիր:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը միասնական տեղեկանքի տրամադրման և հաշվառման համար վարում է գրանցամատյան՝ համաձայն N 3 ձևով հաստատված միասնական տեղեկանքի տրամադրման և վերադարձման հաշվառման մատյանի:

5. Յուրաքանչյուր տարվա սկզբից իրականացվում է միասնական տեղեկանքների նոր համարակալում՝ ըստ պետական մարմինների կողմից յուրաքանչյուր տարվա համար ներկայացված հայտերի քանակի:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետական մարմիններում միասնական տեղեկանքի ստացման համար լիազորված անձին տրամադրվում է միասնական տեղեկանք՝ վերջինիս ստացման համար ներկայացված հայտի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի պահանջներին համապատասխան:

7. Միասնական տեղեկանքը մինչև պետական մարմիններին տրամադրելը կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կնիքով:

8. Տվյալ տարվա համար նախատեսված, սակայն չօգտագործված միասնական տեղեկանքները, մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը, պետական մարմինների կողմից

հանձնման-ընդունման ակտով վերադարձվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

9. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ստեղծած հանձնաժողովը սույն կարգի 9-րդ կետով նախատեսված հիմքով վերադարձված միասնական տեղեկանքները ոչնչացնում է դրանք վերադարձնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

(միասնական տեղեկանքի հերթական համարը)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 4.5-րդ կետը՝ զինծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ փրկարար ծառայության ծառայող հանդիսացող

_____

(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը)

վրա չի տարածվում վերոհիշյալ որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը:

Սույն միասնական տեղեկանքը հիմք է հանդիսանում _____ թվականին սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու համար:

Կ. Տ.

Ձև N 2

ՀԱՅՏ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՍՏԱՑՄԱՆ

Կազմակերպության/հիմնարկի անվանումը_____
Գտնվելու վայրը _____
Փոստային հասցեն _____
Տրամադրման ամսաթիվը _____
Հեռախոսահամարը _____ ֆաքսը _____ էլ. փոստը _____

Խնդրում եմ 20__ թվականի ընթացքում հատկացնել _____ միասնական տեղեկանք:
քանակը (հատ)

_____	_____	_____
(պաշտոնը)	(ստորագրությունը)	(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

Ձև N 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

NN ը/կ	Պետական մարմնի անվանումը	Միասնական տեղեկանք տրամադրելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	Տրամադրված միասնական տեղեկանքների քանակը (հատ)	Միասնական տեղեկանք տրամադրելու հիմքը (գրության կամ հայտի համարը և ամսաթիվը)	Տրամադրված առաջին տեղեկանքի հերթական համարը	Տրամադրված վերջին տեղեկանքի հերթական համարը	Տեղեկանքները հանձնող և ընդունող անձանց անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը	Միասնական տեղեկանքի վերադարձման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	Վերադարձված տեղեկանքի քանակը (հատ)	Վերադարձված առաջին տեղեկանքի հերթական համարը	Վերադարձված վերջին տեղեկանքի հերթական համարը	Միասնական տեղեկանքի վերադարձման հիմքը (գրության կամ հայտի համարը և ամսաթիվը)	Տեղեկանքները հանձնող և ընդունող անձանց անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը	Ծանոթագրություն
1.														
2.														
3.														